



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը նոյեմբերի 2022թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀԵՏԱԽՈՒՅՋԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության ուժային կառույցներում նոյեմբերի 5-ը տոնական է: Այսօր նշվում է հետախույզի օրը, որի կապակցությամբ ի սրտե շնորհավորում եմ ՀՀ զինված ուժերի հետախուզական ստորաբաժանումների զինծառայողներին: Մեր երկրի ներքին կայունության, արտաքին անվտանգության և սահմանային պաշտպանության երաշխավորը առաջին հերթին հետախույզն է՝ իր բարդ և պատասխանատու, հաճախ չբարձրաձայնվող, բայց մեծարժեք աշխատանքով:

Հայկական հետախուզությունը անուրանալի ծառայություն է իրականացրել Արցախյան հերոսամարտից սկսած բոլոր պատերազմներում, իսկ խաղաղ պայմաններում բազմիցս կանխել թշնամական ներթափանցումներ: Բարձր մարտունակությամբ, տեսական հարուստ գիտելիքներով և գործնական հմտություններով օժտված մեր հետախույզները ծառայել են հայրենիքին անմնացորդ նվիրումով: Ի դեմս մեր համաքաղաքացի, փոխգնդապետ Վահագն Թումասյանի՝ ուզում եմ խոնարհումով հարգենք հայրենի պաշտպանության համար նահատակված մեր նվիրյալ հետախույզների հիշատակը, հիշենք և գնահատենք նրանց անձնվեր ծառայությունն ու անօրինակ սիրանքները: Վստահ եմ, որ ոլորտը հուսալի ձեռքերում է, և մեր հետախույզներն իրենց մտավոր բարձր կարողություններով, ֆիզիկական պատրաստվածությամբ և մասնագիտական պրոֆեսիոնալիզմով կնպաստեն Հայաստանի և Արցախի անվտանգության և կայունության ապահովմանը:

Հարգելի՛ հետախույզներ.

Մասնագիտական օրվա առթիվ կրկին շնորհավորելով՝ մաղթում եմ ձեզ բաջառողջություն, զգոնություն, անվտանգ և արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ